

Իա Գրիգալաշվիլի

Իվանե Ջավախիշվիլիի անվան
Թբիլիսիի պետական համալսարան

**ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Վրաց լեզվի իմացությունը ոչ վրացական ծագման քաղաքացիներին երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի մեջ ակտիվ ընդգրկվելու հնարավորություն կտա, այդ պատճառով նրա սովորելն առանձնահատուկ նշանակություն ունի: Վերջին տարիներին այս տեսակետից բազմաթիվ հաջող քայլեր են արվել, հրատարակվել են դասագրքեր, կատարելագործվել ոչ վրացիների համար երկրորդ լեզվի ուսուցման մեթոդիկան և փորձը:

Երկրորդ լեզվի ուսուցման ծրագրով նախատեսված վրաց լեզվի հաղորդակցական ասպեկտների ուսանման ժամանակ ադրբեջանցի ուսանողներին լավ օգնություն կցուցաբերի Մամեդ Գյուլամեդովի «Վրաց-ադրբեջանական» ընթերցանության գիրքը»:

Ոչ վրացիներին երկրորդ լեզվի ուսուցանելու ժամանակ շատ պետք է օգտագործվի հարմարեցված գրականությունը: Ցանկալի է նրանց տալ ժամանակակից վրաց գրողների պատմվածքների հարմարեցված տարբերակներ:

Վրաստանի բազմազգ բնակչության հասարակական կյանքի մեջ ակտիվ ընդգրկվածության և ժողովրդավարության պայմաններում հասարակության անդամների իրավական համագոյակցության կարևոր գործոններից մեկը ոչ վրացական ծագման հասարակության համար երկրորդ կամ պետական, լեզվի իմացությունն է: Վերջին տարիներին այս տեսակետից բազմաթիվ հաջող քայլեր են արվել: Հրատարակվել են դասագրքեր, բարելավվել ոչ վրացալեզուների համար երկրորդ լեզվի ուսուցման մեթոդիկան և փորձը: Թեպետ, դեռ բազմաթիվ հիմնախնդիրներ կան կարգավորելու, որոնց վճռումը դրված է գործող պրոֆեսորների և դասախոսների և սովյալ թեմատիկայով

հետաքրքրված գիտնական-հետազոտողների առջև:

Վրաց լեզվի իմացությունը ոչ վրացական ծագման քաղաքացիներին երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի մեջ ակտիվ ընդգրկվելու հնարավորություն կտա, այդ պատճառով նրա սովորելն առանձնահատուկ նշանակություն ունի:

Լեզվաբանները տարբերակում են լեզվական խմբեր, որոնցում մարդիկ կարող են միավորվել՝ ըստ սեռի, տարիքի, ազգային ծագման, բնակման վայրի կամ թեկուզ հետաքրքրությունների: Թեպետ, այսպիսի խմբավորումը շատ ընդհանուր բնույթի է:

Հայտնի է, որ «լեզվաբանության մեջ մարդիկ խմբավորված են, ըստ այն լեզվի կամ լեզուների, որ կիրառում են: Այս,

որպես նմուշներ դասավորելու, չափումը հեռանում է լեզվաբանությունից՝ ազգը մի տեսակետի համաձայն, սահմանվում է լեզվով, ինչպես նաև այլ գործոններով, մյուս կողմից՝ քաղաքականորեն սահմանված «ազգ» կարգը երբեմն օգտագործվում է լեզվաբանության մեջ, որպեսզի տա «լեզվի» սահմանված կանոնը»: Այս տեսակետից «լեզուն» բարբառների միասնությունն է, որոնցով խոսում են մեկ պետության սահմաններում» (Հոլիդեյ, 1973, էջ 76):

Ոչ վրացիներին երկրորդ լեզու ուսուցանելիս՝ խոսակցական վրացերենի ուսուցման հետ մեկտեղ ցանկալի է, որ ուշադրություն դարձվի նաև գրական լեզվի գիտելիքի խորացմանը, որպեսզի ուսանողները ապագայում կարողանան կարդալ բնագիր գրականությունը: Այս արդյունքին հասնելու համար լավ միջոց է նրանց հարմարեցված գրականություն մատուցելը:

Հարմարեցված գեղարվեստական գրականության ընթերցումը կարևորագույն տեղ է զբաղեցնում և հանդիսանում է լեզվի տիրապետման պարտադիր պայման և միջոց: Հարմարեցված տեքստերն ընդլայնում են ուսանողի մտահորիզոնը, ինքնուրույն եզրակացություններ և ընդհանրացումներ անելու նյութ մատուցում և ստեղծում հիմք՝ մտածողության խորացման համար: Ուսանողներին տեքստի խորը ընթերցման հարցում օգնում է դասախոսը, որպեսզի երկրորդ լեզու սովորողներն ուշադրություն դարձնեն լեզվական նորմերը հասկանալուն, հեղինակի տեսակետի ընդգծմանը: Հարմարեցված գեղարվեստական գրականության գիտակցված ընթերցումը, տեքստի բովանդակության ճիշտ հասկանալը, նրա լեզվական, գեղագիտական և հուզական հարստության ընկալումը նշանակալի ազդեցություն է գործում ուսանողի մտածողության և գրական ճաշակի կատարելագործման վրա:

Դասախոսը կարդացած հարմարեցված տեքստի վերլուծման ժամանակ ուսանողի

կարծիքը պետք է բացահայտի հարցաթերթիկով, թեստավորումով կամ բանավոր հարցումով, հարցերի առաջադրումով: Այսպիսի հարցումներով կնպաստեն ուսանողի կողմից երկրորդ լեզվի ուսուցման գործընթացում բառապաշարի հարստացմանը և վրացերենին բնորոշ լեզվա-ոճական նորմերի մեջ կողմնորոշմանը: Դրա համար անհրաժեշտ է անցկացնել ուսանողների ինչպես անհատական, այնպես էլ խմբային հարցում: Հնարավոր է նրանց միավորել խմբերում: Հարմարեցված տեքստերի վրա աշխատանքը պետք է պայմանավորի քերականական, բառապաշարային, ոճական կարգերի ուսումնասիրում և, կարդացած նյութի հետ կապված, բազմաթիվ խոսողական և գրավոր կարողությունների և հմտությունների զարգացում:

Ցանկալի է, որ դասախոսը ներածական խոսքով հետաքրքրի ուսանողներին, քանի որ դրական հուզական տրամադրվածությունը սովորողին կօգնի տեքստին ուշադիր ծանոթանալու հարցում: Հաճելի է և հետաքրքիր, երբ երկրորդ լեզու սովորողը հասկանում է, որ նրան հնարավորություն է տրվում վրացալեզու հարմարեցված գեղարվեստական, դասական գրականություն կարդալ, հասկանալ ոչ միայն նրա բովանդակությունը, այլև գիտակցել կոնկրետ տեքստի մշակութային-գրական նշանակությունը: Կարդալու կարևորագույն նպատակը տեղեկության ստացումն է: Այդ պատճառով ճիշտ պետք է ընտրվեն տեքստերը, որպեսզի դրանք հետաքրքրեն ընթերցողին:

Դասախոսը կարող է ուշադրությունը կենտրոնացնել տեքստի հեղինակի, ստեղծագործության վերնագրի կամ ստեղծագործության կարևորագույն թեմաներից մեկի վրա, ինչը նշանակալիորեն կավելացնի երկրորդ լեզուն սովորողների հետաքրքրությունը ընթերցման նյութի նկատմամբ:

Հայտնի է, որ տեքստի ընթերցումը բարդ հոգեբանական-լեզվաբանական գործընթաց է, այդ պատճառով անհրաժեշտ

է անտեսանելի թել կապել տեքստի հեղինակի և ընթերցողի միջև: Տեքստի հասկանալը կախված է մի կողմից՝ սովորողների անհատական, տարիքային և սոցիալական առանձնահատկություններից, մյուս կողմից՝ տեքստի լեզվաբանական բնույթից:

Կարծում ենք, երկրորդ լեզվի ուսուցման ծրագրով նախատեսված վրաց լեզվի հաղորդակցական ասպեկտների ուսանման ժամանակ ադրբեջանցի ուսանողներին լավ կօգնի Մամեդ Գյուլամամեդովի «Վրաց-ադրբեջանական ընթերցանության գիրքը»: Թեպետ, անհրաժեշտ է մանկավարժի կողմից համապատասխան նյութի ընտրություն, քանի որ «ուսուցիչը որոշումներ է կայացնում դասընթացի նպատակների և նյութի բովանդակության կազմակերպման վերաբերյալ» (Ֆրիկսեն, 1974, էջ 4): Ինչպես նշում են «Վրաց-ադրբեջանական ընթերցանության գիրքը» ստեղծողները, գիրքը ընթերցանության տեքստերի հավաքածու է, որը նախատեսված է Վրաստանի հանրակրթական ադրբեջանական դպրոցների, նաև Ադրբեջանում վրացական դպրոցների աշակերտներին, ուսանողներին, բնակչության լայն շերտերին, վրաց լեզու սովորողներին օգնելու համար: Գրքի դրական կողմերի թվում պետք է նշել այն, որ վրացական տեքստերին կցված են ադրբեջանական թարգմանություններ, ինչն անվիճելի է, որ ողջունելի փորձ է: Դասագրքերը, որ կիրառում են երկրորդ լեզվի ուսուցիչները, հիմնականում ռուսերեն են: Համարում ենք, որ հարմարեցված տեքստերը, որոնք կառուցվում են վրաց լեզվի և ուսանողների կոնկրետ խմբի մայրենի լեզվով, նպաստում են երկրորդ՝ վրաց լեզվի, ավելի լավ յուրացմանը: Դասական գրականությունից հարմարեցված, ժամանակակից վրացերենի տեղափոխված տեքստերը հուզական ներգործություն են ունենում: Նրանցում փոխանցված թեմատիկան լավ միջոց է լեզուն սովորողների՝ բանավեճի մեջ մտնելու համար, նրանց երկրորդ լեզվով

խոսեցնելու համար: Կարծում ենք, մանկավարժի կողմից հիմնականում վրացերեն խոսելը, ուսանողներին դիմելը և հարցնելը կնպաստի նրանց՝ երկրորդ լեզվի ավելի լավ յուրացմանը: Հայտնի է, որ Բերլիցի մեթոդի համաձայն, «թարգմանությունը, որպես օտար լեզվի յուրացման միջոց ամբողջությամբ հերքված է» (Բեռլից, 1921, էջ 1):

«Վրաց-ադրբեջանական ընթերցանության գիրքը» 1998 թվականին է հրատարակվել Թբիլիսիում: Գրքում նյութն այսպես է տեղադրված. դեռ այբբենական կարգով ընդհանուր կենցաղային թեմատիկայի տեքստեր են ընդգրկված, այնուհետև հարմարեցված տեքստեր վրաց դասականների ստեղծագործություններից, նաև համառոտ տեղեկություններ վրացական արվեստի հուշարձանների վերաբերյալ: Այբբենական կարգով դասավորված տեքստերն այնպես են կառուցված, որ ընթերցողն անշուշտ կհարստացնի իր բառապաշարը: Օրինակ, վրացական այբուբենի առաջին տառի հետ այսպիսի տեքստ է տրված. „ბაღეს აბრეშუმი ჭორღება. სკოლამ ათი ვრამი პარკის მური მიიღო. აბრეშუმის ჭიამ ორმოც დღეში პარკი დაახვია. უხვი მოსავალი მივიღეთ.“ Տվյալ տեքստում, բացի այն, որ ընթերցողը հեշտությամբ մտապահում է այբուբենի առաջին տառը, ուշադրությունը կենտրոնացվում է նաև գյուղատնտեսության բնագավառներից մեկի վրա: ბან՝ բ, տառին հետևում է տեքստ, որում ուշադրությունը կենտրոնացվում է ბან-ով սկսվող բառերին: „ბაღე“ – ցանց, բառն ընթերցողը մտապահում է ձկնորսության թեմայի վրա կառուցված տեքստի շնորհիվ: Նման օրինակներ տեքստում շատ են ընդգրկված: Դպրոցական թեմատիկայի վրա կառուցված նյութը լավ օգնում է աշակերտներին: Եթե այսպիսի թեմատիկայի նյութ կազմվի ուսանողների համար, այդ դեպքում նրանց տարիքին համապատասխան տեքստ պետք է ընտրվի, որն ուսանողների համար հետաքրքիր թեմատիկա կպարունակի:

Գրքի տասնյոթերորդ էջին անվանի վրաց հասարակական գործիչ և գրող Յակոբ Գոգեբաշվիլիի մասին համառոտ, սակայն ուշագրավ տեղեկություն է տրված: Գիրքը կազմողները նկատում են. «Յակոբ Գոգեբաշվիլին մեծ վրաց մանկավարժ է և մանկագիր: Նա գրել է շատ մանկական պատմվածքներ: Յակոբ Գոգեբաշվիլին երեխաների համար կազմել է «Դեղա էնա», բացի այդ, նա ստեղծել է ռուսաց լեզվի ուսումնական դասագիրք ոչ ռուսական դպրոցների համար, ինչով առաջնորդվում էին Անդրկովկասի ազգային դպրոցներում»: Ընթերցանության գրքում ընդգրկված են Յակոբ Գոգեբաշվիլիի «Վանոն և ճնճուկը», «Անտառը և նրա հմայքը», «Եղինիկը» պատմվածքները, որոնք հարմարեցված են հեղինակների կողմից: Թեպետ, մինչև հարմարեցված տեքստերը գրքում տեղ է գտել Գալակտիոն Տաբիձեի «Գիրք» բնաստեղծությունը: Կարծում ենք, ավելի լավ կլիներ, եթե գրողի մասին տրված տեղեկություններին հետևեն Յակոբ Գոգեբաշվիլիի պատմվածքները: «Վանոն և ճնճուկը» հարմարեցված պատմվածքը հարուստ է բայերով, ինչը լեզու սովորողին հնարավորություն է տալիս հարստացնել իր բառապաշարը: Այս բայերն են՝ „დაიჭირა“ - բռնեց, „ჩამოჰკიდა“ - կախեց, „იჭანჯებოდა“ - տանջվում էր, „ებრალე-ბოდა“ - խղճում էր, „დაიხახახა“ - տեսավ: Հարմարեցված տեքստում ընդամենը չորս նախադասություն է, սակայն նրանում արտացոլված գործողությունը փոխանցված է զարգացման մեջ: Յակոբ Գոգեբաշվիլիի «Անտառը և նրա հմայքը», պատմվածքի հարմարեցված տեքստը ընթերցողին հստակ ներկայացնում է անտառի պատկերը: Բերում ենք մեջբերում տեքստից. „ზავზულობით ტყეს არა-ფერი შეედრება. ამთან ანտაռის ხետ ոչինչը ჯი ხამენათვი: ხეები შემოსილია ხშირი მწვანე ფოთლებით. ტანერე კარդარվად են კანაჯ ჯიჰ თერსნერვი: ფოთლები ნიავის დროს საამურად შრიალებენ და სიცხის დროს გრილ ჩრდილს აყენებენ; ჯივი ძამანასკ

თერსნერე ხადելիორեն սվაქում են, իսկ ჯიკին՝ კով սովեր ცგում: ზოგი ხე ისე მაღლაა წასული, რომ თვალს ვერ შევწვდებ; ორიღ დათერ აյնքან են վեր ღვქად, որ նრანგ ვაგაթներე ჯენ եრსომ: ზოგს ისე განივრად გაუშლია ტოტევი, որიღ დათერ აյնքან ჯაენ ფიხე ჯრენგ ჯიოლერე, որ նრანგ თასკ აგათ კენასკვი მხ քანი რნთანիք; Աნთაռე კარդარում են მნდ ხადარენին և აյღ დათერ» (Գյուլամანեղով, 1998, էջ 19):

Մրգի բազմաթիվ տեսակներ են թվարկված Յակոբ Գոգեբաշվիլիի «Մրգատու այգին», պատմվածքի մեջ: Հարմարեցված տեքստում նշված է. «Վրաստանը հայտնի է մրգերով: Գարնանից մինչև ձմեռվա գալը մեր այգիներում տարբեր ժամանակ հասունանում են բալը, կեռասը, խնձորը, տանձը, դեղձը, թուզը և այլ մրգեր» (Գյուլամանեղով, 1998, էջ 26): Գիրքը կազմողը լավ է ընտրել Յակոբ Գոգեբաշվիլիի «Բանջարանոց» պատմվածքը, որում թվարկված են բանջարեղենի տարբեր տեսակներ՝ პომიდორი, ბადრიჯანი, ხახვი, სტაფილო, ნი-ორი, ბოლოკი, კომბოსტო - պոմիդոր, բադրիჯան, սոխ, ვაզար, սխտոր, բողկ, կաղամբ և այլն: Հարմարեցված տեքստերին հետևում են հեղինակի կողմից կազմված տեքստեր, որոնցում գործողությունը դինամիկայի մեջ է հաղորդված: Մեր բերված Յակոբ Գոգեբաշվիլիի «Բանջարանոց» պատմվածքի բառապաշարը լրացնում է հեղինակների կողմից կազմված «Դպրոցական հողամաս» տեքստում ասկա բայերի առատությունը, ինչը հոյակապ փոխանցում է գործողությունների դինամիկությունը և ուսանողին օգնում գյուղատնտեսական գործունեության հետ կապված բառապաշարի ակտիվ կիրառման հարցում: Տեքստերի հետ տրված են հարցեր, դրանց պատասխանելիս լեզու սովորողը նյութի իմացության հետ դրսևորում է այլ ոճական-քերականական իրազեկություններ:

Յակոբ Գոգեբաշվիլիի մյուս պատմվածքները՝ «Ոչխարը», «Գայլը և գյուղը», «Շունը», «Ծիծեռնակը», «Թեյի թուփը», «Միջատը», «Ընկերների հետապնդումը», «Կատուն և կատուն», դասագրքի հեղինակների կողմից հարմարեցված են և ընդգրկված դասագրքի մեջ: Դրանց բառապաշարը հիմնականում վերաբերում է գյուղի կյանքը պատկերող թեմատիկային:

Գրքի մեջ ընդգրկված են նաև հեղինակների կողմից հարմարեցված Մուլխան-Սաբա Օրբելիանիի առակները՝ «Թագավորը և նկարիչը», «Անօգուտ ոսկին», «Գյուղացին և թագավորը»:

Մուլխան-Սաբա Օրբելիանիի «Թագավորը և նկարիչը» առակը լավ է ընտրված դասագրքի հեղինակների կողմից: Բացի այն, որ հետաքրքիր է առակի պուժեն, անվիճելի է, որ այն կհարստացնի աշակերտների բառապաշարը և մանկավարժին հնարավորություն կտա ուսանողների միջև բանավեճ կազմակերպել: Առակի համաձայն, թագավորը պատճառ էր փնտրում նկարչին պատժելու համար, նա չի կարողանում անել այդ քանի որ միաչքանի թագավորին նկարիչն աչքը փակել է տվել, ձեռքին բռնել տվել հրացան՝ եղնիկին կրակելու պահին, և այնպես նկարել: Ընդունակ նկարիչը այսպես խուսափել է պատժից:

Կարելի է հետաքրքիր բանավեճ կազմակերպել նաև Մուլխան-Սաբա Օրբելիանիի երկրորդ հարմարեցված առակի՝ «Անօգուտ ոսկի»-ի, վերաբերյալ: Առակում պատմված է. «Մի մարդ ոսկի է թաքցնում: Ամեն գիշեր գնում է և ստուգում, թե արդյոք տեղում է իր թաքցրած ոսկին: Դա տեսել է մի այլ մարդ և թաքուն հանել այդ ոսկին, իսկ դրա տեղը քար դրել: Գիշերը տեղը կրկին եկել է, բայց ոսկին այլևս տեղում չի եղել, սկսել է բարձրաձայն լացել: Երկրորդ մարդն ասել է՝ ինչո՞ւ ես լալիս, քեզ համար միննո՞ւյն չէ, թե ինչ դրված կլինի հողում՝ անօգուտ ոսկին, թե՞ քարը» (Գյուլամամեդով, 1998, էջ 64): Ուսանողները կարող են դատել թեմայի մասին՝ կարող ենք արդյոք թաղված

ոսկին համեմատել տեսական գիտելիքի հետ, որը մարդը չի կիրառում պրակտիկայում: Կարծում ենք, մանկավարժը կարող է ուսանողների հետ զրուցել նաև թաղված հարստության ավետարանական դրվագի մասին, որի համաձայն, մարդուն Աստծու կողմից տրվում է ընդունակություն, տաղանդ, շնորհ, սակայն մարդը դա ոչ թե զարգացնում է, այլ պահում, և այսպիսի վարմունքով կորցնում Աստծո նվերը:

Գրքի մեջ ընդգրկված է հարմարեցված «Հավատարմություն» պատմվածքը (Ի.Աուերբախի համաձայն): Կարապետի երամը թռչում է լճի մոտ, լող են տալիս կարապետը, բարձրաձայն երգում, գյուղի բնակիչները երեխաներին թույլ չեն տալիս գնալ լճի մոտ, որպեսզի նրանք չխրտնեցնեն երամը: Կարապետը հանգիստ կթռչեին, եթե չլինեք կրակոցը, որը խախտեց լռությունը: Մի կարապետ վիրավորված մնաց ավիին: Նրան չլքեց ընկեր կարապետ, երկար ճախրում էր սպանված ընկերոջ շուրջ: Այնուհետև կարապետ թռավ: Այն մարդուն, որը սպանել էր կարապետին, դատեցին: Մեկ տարի անց նույն օրը և նույն ժամին վերադարձավ կարապետ: Նա մենակ էր, տխուր երգ էր երգում, և բոլորը հիշեցին, որ դա հենց այն կարապետ էր, որը կորցրել էր իր ընկերոջը: Հարմարեցված տեքստն այսպես է ավարտվում. «Ահա, արդեն չորրորդ գարունն է, որ նա թռչում է այստեղ: Ժողովուրդը ընտելացել է նրան և սպասում էն: Կեր են տալիս: Նա հիշում է կրակոցը, սակայն միննույն է գալիս է»: (Ընդգծումը մերն է՝ Ի.Գ.): Ինչպես տեսնում ենք, նախադասության մեջ՝ „ხალხო შეგვგია მას და ელოდებოან“, - «Ժողովուրդը ընտելացել է նրան և սպասում էն» սխալ կա, խախտված է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության շարահյուսական կառուցվածքը: Պետք է լինի. „ხალხო შეგვგია მას და ელოდება - «Ժողովուրդը ընտելացել է նրան և սպասում է», ցանկալի է հետագայում խուսափել անճշտություններից: Հեղինակների կողմից

արած հղում՝ Վալեն Հաջինի «Հարց-պատասխան» բանաստեղծության մեջ „ըջըրիքեթատ“ բառի փոխարեն գրված է „ըջըրիքեթատ“ („ճաճօջե՞լո? եյեթե ռոմ ըջըրիքեթատ ռճոյեթո“- տես նշված գիրքը, էջ 21): Իհարկե, մեր կոլեգիալ դիտողությունը բոլորովին էլ չի նսեմացնում գրքի արժեքը և կարևորությունը երկրորդ լեզուն սովորողների համար: Ի պատիվ դասագրքի հեղինակների պետք է ասել, որ նրանք սովել են տեղեկություններ վրաց քրիստոնեկան հուշարձանների, Մցխեթայի Ջվարիի և Բեթանիայի տաճարի մասին: Տեղեկությունները քաղաքների՝ Ռուսթավիի, Թբիլիսիի, Մցխեթայի մասին, նաև ամենօրյա կենցաղային բառապաշար պարունակող գրույցի թեմաներն իսկապես հարստացնում են սովորողների՝ երկրորդ լեզվի գիտելիքը և նրանց ընդհանուր պատկերացումները Վրաստանի եկեղեցական հուշարձանների և քաղաքների մասին:

Դասական գրականությունից հարմարեցված, ժամանակակից վրացերեն դարձված տեքստերը ընթերցողի վրա համապատասխան հուզական ազդեցություն են գործում: Դրանցում փոխանցված թեմատիկան լավ միջոց է լեզու սովորողներին բանավեճի մեջ ընդգրկելու, նրանց երկրորդ լեզվով խոսեցնելու համար: Մեր ցանկությունն է, որ ապագայի համար ստեղծվեն նման

«ընթերցանության գրքեր», որոնցում կընդգրկվեն Ռևազ Ինանիշվիլիի, Գողերձի Չոխելիի, Գիորգի Լեոնիձեի և այլ վրաց գրողների հարմարեցված պատմվածքների տեքստեր:

Ափսոսում ենք, որ երկրորդ լեզվի ուսուցման այս փուլում այսպիսի գրականության սակավությունը ուսուցիչների համար ևս մեկ հիմնախնդիր է: Ապագայում լրացուցիչ ընթերցման նյութի ստեղծումն անհետաձգելի, շտապ գործ ենք համարում: Ուշագրավ է նաև այն, որ անհրաժեշտ է ճիշտ սահմանել տարիքային խումբը և լեզվի իմացության մակարդակը, այն, թե ում համար պետք է ստեղծվի ընթերցանության գրականությունը: Այն թեմատիկան, որը հետաքրքիր է դպրոցի աշակերտների համար, արդեն հաղթահարել են ուսանողները և, բնականաբար, դա նրանց մեջ չի առաջացնի համապատասխան հետաքրքրություն: Գեղարվեստական ստեղծագործությունները երկրի մշակութային ոլորտի և տեղեկատվական հարցերով լավ ծանրաբեռնված են: Այստեղից ելնելով՝ երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ հարմարեցված տեքստերի ընդգրկումն աստիճանաբար զարգացնում է և լիարժեքացնում սոցիոմշակութային իրազեկությունը, գիտելիքի մակարդակը և որակը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բեռլից, 1921 - Berlitz, Method For Teaching Modern Languages, Berlin, Siegfried Gronbach, 1921
 Գյուլմամեդով, 1998 – Մամեդ Գյուլմամեդով, «Վրաց-ադրբեջանական ընթերցանության գիրք», Թբիլիսի, 1998
 Էրիքսեն, 1974 - Stanford C. Ericksen, Motivation For Learning, A guide for the Teacher of the Young Adult, Ann Arbor, The University of Michigan Press, 1974
 Հոլիդեյ - M. A. Halliday Professor of General Linguistics, University of London; Angus Mc Intosh Forbes Professor of English Language University of Edinburg; Peter Strevens Professor of Applied Linguistics, University of Essex, The Linguistic Sciences and Language Teaching, Longman 1973

Ia Grigalashvili

Ivane Javakhishvili Tbilisi State University

The Role of Adapted Texts in Teaching of the Second Language On the Example of One Textbook

ABSTRACT

One of the important factors to involve in social life actively for non-Georgian origin society and polyethnic population of Georgia, law equal cohabitation of the members' of society in the conditions of democracy is the knowledge of the second, a state language. In the last years much successful steps have been made, the textbooks were published, has improved language teaching methodic and practice. Though there are many problems in front of the professors and searchers who are interested in above noticed subject.

We think M. Giulmamedovi's "Georgian-Azerbaijani reading book" will help to the Azerbaijani students while studying of communication aspects of Georgian language which is conventional by the second language programme. Though the teacher have to choose the appropriate material, it's essential. As the compilers denote, the book represents the collection of the reading texts which are defined for Azerbaijani schools of general education, also for the schoolchildren, the students, the whole population, the learners of Georgian language. We have to denote one of the positive sides is that Azerbaijani translations are next to Georgian texts and it is certainly an acceptable practice. Mainly, the textbooks which are used by the teachers of the second language are Georgian-Russian.

We hope that in the future the adapted texts will have been built in Georgian language and the native language for the concrete students' group. It will help the students to study the second language better. The adapted texts from classic literature are translated into modern language and it influences on the emotions of the reader. The themes which are given in such books for students are good to discuss and speak the second language.

It's pity that on this stage of the learning of the second language the lack of a such literature makes the another problem for the teachers. Making of the reading literature we consider as an instant matter. We have to denote also that it's necessary to define exactly the age-groups and the level of the knowledge of the language while making the reading literature. The themes interesting for the schoolchildren is already known for the students and it's natural they won't interest them. The literary works are well-loaded by cultural field of the country and informational questions. So, to involve the adapted texts while teaching the second language gradually improves and perfects a socio-cultural competence, the level and degree of the knowledge.